

պիտի հաւարուին, որոշման ենթարկուելիք կէտերն ուսումնասիրելու համար, որոնք տասն և մէկ գլուխներու վրայ պիտի բաշխուին: Անկէ ետքը ընդհանուր ժողովը պիտի գումարի, ուր պիտի վիճարանուի, և որոշուին յանձնաժողովներուն մէջ պատրաստուած ծրագիրները: Վերջապէս, Ս. Նիկողայոսի Տօլետենացւոյ եկեղեցւոյն մէջ, որ Հռովմի հայ հասարակութեան յատկացուած է, ժողովը պիտի հաշակէ իր վճիռները հանդիսական նիստի մը մէջ: Կկարծուի թէ ժողովին բոլոր դործողութիւնները ամիսուկէս պիտի տեւեն:

Օ Տ Ա Ր Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

ՌՌԻՍ ՊՐԱԻՍՏԱԻ ԵԿԵՂԵՅԻ

Սրբ. Սինօդի 1912 թ. նախահաւիւր.

Церк. Вѣст. (№ 36) գրում է որ պետական Դոււմա է մուծուած Սրբ. Սինօդի 1912 թուի նախահաշիւը: Մուտք հաշուած է այս տարուայ հաշուով 82,549 ա. ծախք 40,129977, այսինքն 2,594501 ա. ծախքի յաւելացումն բաշխուած է ըստ այսմ.

Քաղաքների և գիւղերի հոգևորականութեան ռոճիկ 586,523 ա.

Դպրոցական հաստատութիւններին 116,000 ա.

Եկեղ. ծխական տարրական դպրոցներին 284,500 ա.

Եկեղեցական դպրոցների ուսուցիչներին 1,511,00 ա.

Բացատրական լուծակազիրը մասնանիշ լինելով Սրբ. Սինօդի անդամների օրապահիկ 2 ա. 35 կ. և 3 ա. 13 կ.-ը, Սինօդական Մասնաժողովը բարւոք է համարում նշանակել տարեկան վարձաարութիւն—Պետերբուրգի միտրօպօլիտին որպէս նախագահողի՝ 5000 ա. Մոսկովայի միտրոպօլիտին ամբողջ տարուայ համար 4000 ա. Կիեւի միտրոպօլիտին հաշուելով միայն մասնակցութեան ժամանակը

4000 ա. իսկ մնացած հինգ եպիսկոպոսներին իւրաքանչիւրին 2000 ա. Սինոդի նիստերին նրանց ներկայութեան օրերի համեմատ:

Թեմական առաջնորդների ռոճիկների հաւասարութեան համար Սինոդական Մասնաժողովը համակերպելով Պետական Դումային, որոշել է որ առաջնորդների ռոճիկը տարեկան 6000 ռուբլուց պակաս և 12,000-ից աւելի չլինի: Իսկ նշանաւոր թեմերի, որպիսի են Կազանինը, Խարկովինը, Լիտովինը, Վոլնինը, Կիշինեվինը, Խերսոնինը, Աւտրախանինը և Վրաստանի Եկզարխինը—18,000 ա.:

Միտրոպոլիտներին ամենաբարձր ռոճիկ ենթադրուած է ամեն մէկին 36000 ա. Մասնաժողովը սահմանում է փոխանորդ եպիսկոպոսների ռոճիկ ամենասակաւը 3000 ա. Պաշտօնից դուրս գալուց յետոյ հանգստեան մէջ եղող եպիսկոպոսներին կենսաթոշակ տարեկան 4000 ա. իսկ ցարդ տրում էր 1000—1500 ա. որ համեմատութեամբ ռոճիկ՝ շատ չնչին էր:

Քաղաքների և գիւղերի հոգևորականութեան համար պէտք է 14,766,966 ա. Այժմ գոյութիւն ունեցող ծխական հոգևոր պաշտօնեաների ռոճիկը մինչև միջին չափը հասցնելու համար (քահանաներին 300 ա. սարկաւադներին 150 ա. և սաղմոսասացներին 100 ա.) պէտք է յատկացնել գանձարանից գեւ. 9,000,000 ա. ևս, որ թերևս գլուխ գալ 20 տարուց յետոյ, ուստի այս տխուր դրութիւնը ի նկատի ունելով, Սինոդը նոր մասնաժողով է կազմել պետական գանձարանից այդ հոգևորականութիւնը ապահովելու խնդիրը մշակելու համար:

Պետական Դուման 1910, 1911 թուերին 2000-ական ռուբլի յաւելացումն Սրբ. Սինոդի օրբեր-պրօկուրօրի օգնականի ռոճիկի վերայ համարելով որպէս բացառիկ դէպք Սարլէրի համար, երբ սա նոյն պաշտօնը վարում էր, առարկել է կրճատել. հոգևոր վարչութիւնը պէտք է Բարձրագոյն բարեհաճութիւն խնդրի, որ նոյն յաւելումն (2000 ա.) տրուի օրբեր-պրօկուրօրի այժմեան օգնական Ա. Պ. Բոգովիչին էլ, զորով նրա ռոճիկը կը դառնայ տարեկան 10,000 ռուբլի:

Արգելում է հոգեւորականներին զեմսկի պաշտօնեաներ լինելու:

Россиа (4 սեպտեմբ.) գրում է. որովհետեւ 1911 թ. մարտի 14-ին Բարձրագոյն Հրովարտակի մէջ ուղղակի ցուցում չկայ, թէ սրբազնագործ եկեղեցական սպասաւորները կարող են ընտրուել զեմսկի վարչութեան պաշտօններ, Սինօդը, զեմսկի վարչութեան մէջ նախագահի և անդամի պաշտօնները հոգեւորական անձերի համար համարելով չհամապատասխանող նրանց կոչմանը, անպատշաճ գաւառ. ուստի և, թէ պաշտօնի մէջ և թէ պաշտօնից դուրս եղած հոգեւորականները չեն կարող զեմսկի վարչութիւնների մէջ նախագահութեան և անդամութեան համար ընտրելի լինել:

Սիրիի համար Բանաններ պատրաստելու դասընթացներ.

Нов. Врем. (Սեպտեմբ. 20) յայտնում է որ Մոսկվայում, առաջնորդարանում հանդիսաւոր կերպով բացուել է հովուական երրորդ դասընթացքը Սիրիի համար քահանաներ պատրաստելու: Ներկայ են եղել միտրոպօլիտ Վլադիմիրը և բաղմաթիւ եկեղեցական ու աշխարհական բարձրաստիճան անձինք, 130 հոգի են դասընթացքը լսողները, որոնցից 80-ը քահանայ, Դասընթացքը պէտք է ղեկավարի Վոստորգով աւագ քահանան:

Յուսիկ Արեւագ.

